Մասնավորապես, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան պահանջում է մասնակից պետություններից մշակել և իրականացնել անչափահասների արդարադատության համապարփակ քաղաքականություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների իրավախախտումների կանխարգելմանը, այլընտրանքային միջոցների ներդրմանը, որոնք հնարավորություն կտան անչափահասների իրավախախտումներին արձագանքելու՝ առանց դատավարական ընթացակարգերին դիմելու:

«ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ» խրախուսում է իրավական ընթացակարգերի և պաշտոնական քննության փոխարեն համայնքային ծրագրերի, ցանկացած պետական մարմնում առավելագույնս Երեխայի շահերից ելնելով քննության իրականացումը, մինչև անչափահասին ազատությունից զրկելը գործի մանրակրկիտ քննությունը, անչափահասների գործերով զբաղվող անձնակազմի համար պարտադիր մասնագիտացված վերապատրաստումը, ազատությունից զրկելու դեպքում վաղաժամ ազատվելու հնարավորության դիտարկումը, արդյունավետ ծրագրման և քաղաքականության ձևավորման համար անհրաժեշտ հետազոտությունների կազմակերպումը և խթանումը:

Հայաստանի Հանրապետության անչափահասների արդարադատությունն աչքի է ընկնում մի շարք բացթողումներով:

Առաջին հերթին հատկանշական է այն հանգանքը, որ ՀՀ օրենսդրությունն անչափահասների արդարադատության վերաբերյալ սահմանափակ թվով դրույթներ է պարունակում: Անչափահասների արդարադատության վերաբերյալ առանձին օրենսդրական ակտ գոյություն չունի, իսկ օրենսդրական հիմքերի բացակայությամբ արդարադատության իրականացումը անհնարին է դաշնում: Ակնհայտորեն, Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի հանցագործությունների կանխարգելման պետա-

կան համընդիանուր քաղաքականություն, իսկ գոյություն ունեցող սոցիալական ծրագրերը, որոնք միտված են անչափահասների հանցավորության կամխարգելմանը, բարձր արդյունավետությամբ աչքի չեն ընկնում:

ՀՀ-ում գոյություն չունեն անչափահասների գործերով մասնագիտացված հատուկ դատարաններ կամ հատուկ դատավորներ, որոնք կըննեն միայն անչափահասների գործերը:

Նման բացթողում նկատելի է նաև դատախազության համակարգում: Այստեղ ևս գոյություն չունի անչափահասների գործերի քննություն և քրեական հետապնդում իրականացնող մասնագիտացված ստորաբաժանում:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ և օրենսդրական խնդիրների առկայությամբ անչափահասների արդարադատությունը չի համապատասխանում ընդունված չափանիշներին:

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն առանձին գլխով՝ «Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները», սահմանում է անչափահասների արդարադատությանը վերաբերող հիմնարար դրույթներ:

Այսպես, օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ կամ կարող են նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ»: Իսկ 86-րդ հոդվածը տալիս է պատժի տեսակների ցանկը: Ըստ այդմ, անչափահասների նկատմամբ կիրառելի են հետևյալ պատժի տեսակները՝

- 1) տուգանքը.
- 2) հանրային աշխատանքները.

3) կալանքը.

4) որոշակի ժամկետով ազատազրկումը:

Անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի տեսակների վերլուծությունից պարզ է դաշնում, որ նախատեսվող կարգավորումը չի կարևորում անչափահասների կարիքները և այդ խնդի առանձնահատկությունները: Այսպես, անհասկանալի է, թե տուգանքը որքան արդյունավետ կարող է լինել անչափահասի նկատմամբ, եթե ՀՀ Աշխատանքային օրենսգրքով նախատեսված են տարատեսակ սահմանափակումներ: Քրեական օրենսգրքով նախատեսվում է, որ անչափահասների նկատմամբ նշանակված «տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում»: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ անչափահասների նկատմամբ նշանակված տուգանքը հիմնականում մարում են նրա ծնողները, ինչը, իր հերթին, խախտում է նույն օրենսգրքով նախատեսված անձնական պատասխանատվության սկզբունքը:

Ինչ վերաբերում է հանրային աշխատանքներին, ապա պետք է նշել, որ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն. «...Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում՝ սույն օրենսգրքի 101-րդ հոդվածին, 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 155-րդ հոդվածին համապատասխան:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձինք չեն կարող ընդգրկվել աշխատանքի հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, բացառությամբ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի:

Տասնչորսից մինչև 16 տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր»:

Ըստ Էության, հանրային աշխատանքներ կատարելը պետք է նախ համապատասխանի Աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջներին: Ճիշտ է, օրենքով նախատեսված է, որ դատա-

ՎՃԻՉԾ ԿԱյացնելու պահին 16 տարին չլրացած անձանց նկատմամբ հանրային աշխատանքներ չեն նշանակվում, սակայն նույնիսկ 16 տարին լրացած անձանց դեպքում նման աշխատանքներ կատարելը կարող է ծանր հետևանքներ թողնել նրանց հետագա հոգեկան, մտավոր և ֆիզիկական զարգացման վրա և բացասաբար ազդել հասարակության մեջ նրա հաստատման ու ինքնագնահատականի ծեավորման վրա:

Ինչ վերաբերում է կալանքին և ազատազրկմանը, ապա գոյություն ունեցող միջազգային մի շարք փաստաթղթեր սահմանում են այն իիմնական դրույթներն ու չափորոշիչները, որոնք պետք է իիմք դառնան բոլոր երկրներում անչափահասների արդարադատության արդյունավետ իրականացման համար՝ հաշվի առնելով նրանց մտավոր և ֆիզիոլոգիական զարգացածության աստիճանն ու առանձնահատկությունները:

Մասնավորապես, Հավանայի կանոնների համաձայն՝ Երեխան կարող է գրկվել ազատությունից միայն այն դեպքում, եթե ազատազրկումը կիրառվում է որպես ծայրահեղ միջոց՝ սահմանափակ և բացարիկ դեպքերում, և հնարավորինս կարձամանակահատվածով:

Հայաստանի Հանրապետությունում այս սկզբունքը նույնպես հաճախ չի պահպանվում, և անչափահասները անհարկի ենթարկվում են ազատազրկման: Ազատազրկման պայմաններում դեռևս չկայունացած անչափահասի սոցիալ-հոգեթերանական առանձնահատկությունները հնարավոր է այնպիսի փոփոխությունների ենթարկվեն, որ անչափահասի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը մեծանալու:

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՅԻՆ/ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Չնայած ՀՀ քրեական օրենսգիրքը հնարավորություն է տալիս առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասին ազատել քրեական պատասխանատվու-

թյունից և նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ, այնուամենայնիվ անչափահասների նկատմամբ կիրառվող այլընտրանքային պատժատեսակների անհրաժեշտությունը դեռևս մեծ է: Քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինելը հնարավորություն է ընձեռում անչափահասներին հեռու մնալ քրեադատավարական ընթացակարգերից և քրեական անցյալ ունենալուց: Այլընտրանքային միջոցների կիրառությունը մեղմում է ազատազրկումն ուղեկցող ստիգմատիզացիան, բռնությունը, ստորացումը և սոցիալական խզումը: Խնդիրն այն է, որ ազատազրկման ձևով կիրառվող պատժի դեպքում անչափահասի մեջ ձևավորվում է հանցագործի ինքնություն: Անչափահասները սովորում են հանցագործության հնարքները, ձեռք են բերում համապատասխան խոսելաձև և ընտելանում են բանտային մշակույթին: Մեկ անգամ սեփական անձը հանցագործ ընկալելուց հետո այլևս դժվար է դառնում հետագայում փոխվել և հարմարվել դպրոցական ու ընտանեկան կյանքին:

Հետևաբար, անչափահասներին պետք է հեռու պահել քրեական ընթացակարգերից և անհիմն ազատազրկումներից:

Միջազգային չափորոշիչներով պահանջվում է իրավախախտ անչափահասների նկատմամբ միջոցներ ձեռնարկել՝ առանց դատաքննության դիմելու, մարդու իրավունքների լիակատար պաշտպանության և իրավական երաշխիքների պահպանմամբ: Հաշվի առնելով այն փաստը, որ անչափահաս իրավախախտների մեծ մասը կատարում է միայն ոչ մեծ ծանրության հանցանք, պետք է արմատավորվի անչափահասներին քրեական արդարադատության համակարգից հեռացնելու և այլընտրանքային (սոցիալական) ծառայություններին դիմելու (այսինքն՝ քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով) գործելառձ, որը կարող է և պետք է կիրառվի դեպքերի մեծ մասի դեպքում:

Հետևաբար, անհրաժեշտ է մշակել և իրականացնել անչափահասների արդարադատության ընդգրկումն քաղաքականության մաս հանդիսացող բազմազան միջոցառումներ, որոնք կապահովեն հանցանք կատարած անչափահասների բարեկեցությունը և համարժեք կլինեն հանցագործության կատարման հանգա-

մանքներին և արարքի ծանրությանը: Այդ միջոցառումները պետք է ընդգրկեն՝

- խնամքը,
- նախազգուշացումները,
- խնամակալությունը,
- վարքագծի նկատմամբ հսկողությունը,
- պրոբացիան,
- խորհրդատվությունը,
- դաստիարակչական, վերապատրաստման ծրագրերը
- հատուկ հաստատությունում տեղավորելու այլընտրանքային միջոցների կիրառումը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան նախատեսում է այլընտրանքային միջոցների կիրառման որոշ պայմաններ: Դրանք են՝

- քրեական պատասխանատվությունը փոխարինվում է այլընտրանքային միջոցներով, եթե գոյություն ունեն արժանահավատ ապացույցներ տվյալ հանցանքը անչափահասի կողմից կատարված լինելու և մեղքը կամավոր խոստովանելու մասին,
- օրենքը պետք է դրույթներ նախատեսի քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինելու դեպքերի մասին: Այս դեպքում ուստիկանության, դատախազության և այլ մարմինների լիազորությունները պետք է վերանայվեն ու կարգավորվեն,
- այն դեպքերում, երբ իրավասու մարմիններն առաջարկում են անչափահասի նկատմամբ քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներ, Երեխային պետք է տրվի այդ միջոցի ընտրության համապատասխանության և նպատակահարմարության վերաբերյալ իրավական կամ այլ աջակցություն,
- քրեական գործով անչափահասների նկատմամբ այլընտրանքային միջոցների կիրառման դեպքում գործը պետք է

Վերջնականորեն դադարեցվի, իսկ անչափահասի վերաբերյալ առկա բոլոր քրեական գրանցումները՝ ոչնչացվեն:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինելու համար բացակայում են օրենսդրական իիմքերը.

- Հայաստանի Հանրապետությունում հանցանք կատարած անչափահասը որակապես չի տարբերվում չափահաս հանցագործներից, հետևաբար գոյություն չունի անչափահասների արդարադատության ինքնուրույն համակարգ,
- ոչ պատժիչ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները հնարավոր է կիրառել միայն դատական քննության փուլում՝ հակասելով քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինելու առաջնային նպատակներից մեկին՝ լուծել իրավախախտ անչափահասների գործերը՝ առանց դատական ընթացակարգի դիմելու,
- ՀՀ օրենսդրության համատեքստում տուժողի և հանցագործի միջև հաշտեցումը պետք է քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք ծառայի՝ առանց այլընտրանքային միջոցներին դիմելու: Հետևաբար, փաստորեն տուժողի և հանցագործի միջև հաշտեցումը ծառայում է քրեական պատասխանատվությունից ազատելու ֆորմալ պայման: Այնուամենայնիվ, մեղադրյալի ակնհայտ հանցավոր վարքագծի դեպքում միայն հաշտեցումն ինքնին չի վերացնում հանցագործության կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները,
- քրեական դատավարության վաղ փուլերում կիրառվող միջոցների ցանկը խիստ սահմանափակ է: Ի տարբերություն դրան՝ բազմաթիվ երկրներում ստեղծվել են բազմաթիվ համայնքային ծրագրեր, ինչպես, օրինակ՝ համայնքային ծառայություն, ինտենսիվ դաստիարակչական ծրագրեր, ընտանիքների հետ խորհրդակցություններ և վերականգնողական արդարադատության այլ եղանակներ, ներառյալ վնասների վերականգնում և տուժողների փոխառութուցում:

ԱՆՀԱՓԱԿԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անշափահասների արդարադատության իրականացման ընթացքում արդար դատաքննության սկզբունքի ապահովման կարևոր պայմաններից մեկը համապատասխան իրավական օգնության և խորհրդատվության տրամադրումն է:

«Հրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «Հրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝ ...հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անշափահաս է»:

Մինչդատական փուլում և քրեական դատավարության ընթացքում անշափահասը պետք է իրավական աջակցություն ստանա համապատասխան փաստաբանի կողմից:

Անշափահասի՝ արդյունավետ և որակյալ պաշտպանության իրավունքն ապահովելու համար անհրաժեշտ է երաշխավորել անշափահասների վարույթ ներգրավվող փաստաբանների խորը մասնագիտացվածությունը, անշափահասների արդարադատության վերաբերյալ միջազգային չափանիշների իմացությունը:

Որպես կանոն՝ փաստաբանները հանդես են բերում գուտ իրավաբանական գիտելիքներ, սակայն չեն տիրապետում հոգեբանասոցիալական որակների, որոնք անհրաժեշտ են անշափահասների հետ հաղորդակցվելու համար: Փաստաբանները չեն մասնակցում անշափահասների զարգացման, էնոցիոնալ վիճակը հանդարտացնելու, պատանեկան ըմբռստությանն արձագանքելու, հախոււն գործողություններին, ցուցադրական խիզախությանը կամ անշափահասներին բնորոշ վարքագծային հատկանիշներին վերաբերող վերապատրաստման դասընթացների:

«Հ-ում գոյություն չունի որևէ իրավական դրույթ, որը նախատեսում է հոգեբանի կամ սոցիալական աշխատողի մասնակցություն անշափահասի հարցաքննությանը և նրա մասնակցությամբ դատավարության ժամանակ:

Այս տեսանկյունից խիստ կարևոր է ներգրավել հոգեբանների, որոնք կօգնեն դատարանին ճիշտ հետևություններ կատարել և

նպաստել, որպեսզի անչափահասը գործի լուծումից հետո նորմալ կյանք վարի:

«Հրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի համաձայն՝ «Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ»:

«Արակտիկան ցույց է տալիս, որ մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության ժամանակ որպես մանկավարժ ներգրավվում է նրա դպրոցական ուսուցիչը։ Դպրոցական ուսուցիչների մասնակցությունը դատավարությանը կաշկանդում է անչափահասներին և դժվարություններ ստեղծում հետագայում նրանց վերահնտեղմանը հասարակության մեջ։ Նման խնդիրներից խուսափելու համար պետք է օրենսդրական լրացուցիչ կարգավորում տրվի, և սահմանվի այն անձանց ցուցակը, ովքեր կարող են հանդես գալ որպես մանկավարժ։

Սահմանված է նաև, որ անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը։ Օրինական ներկայացուցչի և անչափահասի միջև հնարավոր հակասությունների, օրինական ներկայացուցչի կողմից անչափահասի շահերին հակասող վարքագիրի դրևադրման դեպքում կարգավորված չէ օրինական ներկայացուցչի հեռացման կամ հնարավոր կոնֆլիկտի լուծման կարգը։

«Հրեական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածով սահմանվում է անչափահասների գործերով վարույթի հատուկ կարգ, որը կիրառվում է այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերում, որոնց տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին։ Միաժամանակ, օրենքը չի սահմանում, թե ինչ կարգով են քննվում հանցագործությունը անչափահասության տարիքում կատարված, սակայն գործի քննության ընթացքում չափահաս դարձած մեղադրյալների վերաբերյալ գործերը։

ԱՆԶԱՓԱՀԱՍՏՈՒԹՈՒՆԵՐԻՆ ԵՎ ՎԿԱՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջազգային չափանիշները անչափահաս տուժողների և վկաների համար պահանջում են արդյունավետ իրավաբանական օգնության հնարավորություն՝ առավելագույնս հաշվի առնելով երեխայի շահերը: Ի լրացում անչափահաս տուժողների անվճար իրավական օգնությունը նախատեսող հատուկ իրավական պահանջներին՝ մարդու իրավունքների հիմնական չափանիշները նույնպես պահանջում են անվճար իրավաբանական օգնություն՝ ապահովելու դատարան դիմելու իրավունքը:

«Հրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է տուժողների և վկաների իրենց ցանկությամբ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն:»

«...Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել նրանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի հարցաքննության ժամանակ իրավունք չունի արգելել նրա կողմից որպես ներկայացուցիչ իրավիրված փաստաբանի մասնակցությունը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից»¹:

Բացի այդ, Քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածը նախատեսում է վկայի իրավունքը քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ: Քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածը նախատեսում է պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը: Այս հոդվածի համաձայն պաշտպանի մասնակցության պարտադիր է, եթե հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալը անչափահաս է: Այդուամենայնիվ, այս դրույթները չեն ապահովում

1 «Հրեական դատավարության օրենսգիրք, հոդված 10:

անչափահաս տուժողների և վկաների, հատկապես սեռական բռնության դեպքերում, անվճար իրավաբանական օգնության իրավունքը: Հետևաբար, այն դեպքերում, երբ անչափահաս տուժողը ցանկանում է իր շահերը ներկայացնել փաստաբանի միջոցով, սակայն չունի բավարար դրամական միջոցները, այդ իրավունքը պրակտիկայում դառնում է անիրագործելի: Մյուս կողմից, վկայի իարցաքննության ժամանակ փաստաբանի ներկայությունը կրում է ձևական բնույթ, քանի որ վերջինս իրավունք չունի հարցեր տալու կամ պատասխանները մեկնաբանելու: Նման սահմանափակումը փոքրացնում է փաստաբանի՝ տուժողներին և վկային համապատասխան և արդյունավետ իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը:

Այս տեսանկյունից, ներպետական օրենսդրությունը չի համապատասխանում միջազգային չափանիշներին և չի ապահովում պաշտպանության կարիք ունեցող անչափահաս տուժողների և վկաների պաշտպանությունը: Անիրաժեշտ է նշել, սակայն, որ քաղաքացիական իրավունքի շատ երկրներում և ընդահուր իրավունքի որոշ երկրներում ճանաչվում է տուժողների և վկաների իրավաբանական օգնության իրավունքը քրեական դատավարության ընթացքում: Որոշ պետություններում հանցագործությունից տուժողները ստանում են պետության կողմից ֆինանսավորվող օժանդակություն: Նույնիսկ վկաները, ովքեր հանցագործությունից տուժող չեն հանդիսանում, իրավունք ունեն ստանալու իրավաբանական խորհրդատվություն, այսպես կոչված, վկաների իրավաբանական խորհրդատուի կողմից: Համապատասխան դեպքերում, երբ վկան չի կարող օգտվել իր իրավունքներից կամ վկայի նկատմամբ առկա են ճնշումներ, իրավաբան-խորհրդատուն նշանակվում և վճարվում է պետության կողմից: Այդ երկրներում, վկաների իրավաբան-խորհրդատուն իրավունք ունի մասնակցել վկայի հարցաքննություններին քրեական վարույթի սկզբնական փուլերից: Սա թույլ է տալիս խորհրդատուին ստուգելու, թե արդյոք վկայի իրավունքները պահպանվել են, ինչպես նաև պահանջել, որպեսզի դրանք պահպանվեն:

Բացի այդ, որոշ երկրներում նախատեսվում են պաշտպանության և աջակցության այլ միջոցառումներ ևս: Օրինակ՝ Գերմանիայի

Քրեական օրենսգիրքը սահմանում է պաշտպանության և մասնակցության գնահատողական համակարգ՝ կախված վկայի վրա հանցագործության ազդեցության աստիճանից:

Միջազգային չափանիշներին համապատասխանելու համար «Հ օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել անչափահաս տուժողների և վկաների անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը։ Անչափահաս տուժողի կամ վկայի, կամ վերջիններիս ծնողների կամ խնամակալների, աջակցող անձի, եթե այդպիսին առկա, խնդրանքով կամ միջնորդությամբ, ինչպես նաև դատարանի սեփական նախաձեռնությամբ անչափահաս տուժողը կամ վկան պետք է ապահովվեն պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնությամբ։

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱԾՈՒՄԸ

Կալանավորման տարածական կիրառումն անչափահաս ամբաստանյալների շրջանում նույնապես խնդրահարույց է։ Օրենքը, իբրև անչափահասների նկատմամբ կալանավորման կիրառման բացառություն, նախատեսում է միայն միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում։ Միաժամանակ, օրենքով որևէ այլ լրացուցիչ հիմք նախատեսված չէ անչափահասների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս հաշվի առնելու համար։ Մինչ կալանավորման ընտրությունը չի քննարկվում հսկողության հանձնելու հնարավորությունը։ Միջազգային չափանիշները սահմանում են, որ կալանավորումը պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում, երբ այլընտանքային միջոցների կիրառմամբ հնարավոր չէ ապահովել անչափահաս մեղադրյալի պատշաճ վարքագիծը վարույթի ընթացքում։ Տարբերակված մոտեցում օրենքը չի նախատեսում նաև անչափահաս մեղադրյալների նկատմամբ կալանավորման կիրառման ժամկետների առնչությամբ։

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային չափորոշիչները պահանջում են, որ դատական քննությունը կազմակերպվի անչափահասներին հարմարեցված պայմաններում և նրանց մատչելի լեզվով: Բոլոր դատական գործընթացներում անչափահասները պետք է իրենց տարիքին, հատուկ կարիքներին, հասունությանն ու ըմբռնման մակարդակին համապատասխան վերաբերմունքի արժանանան՝ ի նկատի ունենալով հաղորդակցման ցանկացած հավանական դժվարություն: Անչափահասների դատական գործերը պետք է վարել առանց նրանց ահաբեկելու և անչափահասին հարմարեցված պայմաններում:

Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաշար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք»: Սույն իրավական դրույթն ամրագրվել է նաև ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մեջ:

Նշված հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքը իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար ունենալ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք: Անչափահասների դեպքում ողջամիտ ժամկետները պետք է որոշվեն՝ ուշադրություն դարձնելով նրանց կրթական մակարդակին ու հոգեբանական զարգացվածությանը:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հետաքննության մարմիններն ու դատավորները պետք է քայլեր ծեռնարկեն, որպեսզի անչափահասների գործերով դատավարությունն ավարտին հասցվի ողջամիտ ժամկետներում: Առաջին հերթին պետք է օրենքով սահման-

վեն անչափահասների գործերով դատավարության առավելագույն տևողությունը, ինչպես նաև սահմանված ժամկետների երկարացման դեպքերն ու պայմանները:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՓՈՎԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի² 40 (2) (b) (iv) հոդվածն անդամ պետություններին պարտավորեցնում է ապահովել անչափահասի արդյունավետ մասնակցությունը քրեական դատավարությանը: Դրա համար պահանջվում է, որ յուրաքանչյուր անչափահաս իրեն հասկանալի լեզվով բացատրություն ստանա ներկայացված մեղադրանքի, անչափահասի արդարադատության և դատարանի կողմից նշանակվող միջոցների մասին: Դատավարությունը պետք է այնպիսի պայմաններում անցկացվի, որ անչափահասն ազատորեն մասնակցություն ցուցաբերի և ներկայացնի իր դիրքորոշումը:

«Հքրեական դատավարության օրենսգրքի 328-րդ հոդվածով նախատեսված է դատավորի կողմից ամբաստանյալին իր իրավունքներն ու պարտականությունները բացատրելու պարտականությունը: Ըստ այդմ՝ նախագահողն ամբաստանյալին բացատրում է նույն օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նրա իրավունքները օրենսգրքի 314.1-րդ հոդվածի վեցերորդ մասով նախատեսված կարգով դատական սանկցիա կիրառելու դեպքում:»

Ակնհայտորեն դատավորի վրա որևէ պարտականություն չի դրված անչափահասներին իրենց իրավունքներն ու պարտականությունները բացատրելիս հաշվի առնել նրանց տարիքն ու առանձնահատկությունները: «Հ փորձը ցոյց է տալիս, որ վերը նշված պարտականությունն իրականացվում է միայն ամբաստանյալի իրավունքներն ու պարտականությունները թվարկող գրավոր փաստաթղթի տրամադրմամբ կամ 65-րդ հոդվածում սահմանված իրավունքների արագ թվարկմամբ: Անչափահաս-

2 ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 40 (2) (iv):

Աերի արդարադատության իրականացման գործում «Հ փորձն ու օրենսդրական ձևակերպումը չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Երեխայի պաշտպանության շահերից ելնելով՝ դատավորը ոչ միայն պետք է իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ առանձին փաստաթուղթ տրամադրի, այլ նաև, հաշվի առնելով անչափահանների տարիքն ու հոգեբանությունը, բանավոր և նատչելի բացատրի անչափահան ամբաստանյալներին:

ԱՆՉԱՓԱՀԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը»:

Սահմանված կանոնի համաձայն՝ դատարանն արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում: Սակայն ուսումնասիրում է ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

Սահմանված են նաև արագացված դատաքննություն իրականացնելու ընթացակարգերը: Մասնավորապես, օրենքը պահանջում է, որ դատախազը ներկայացնի մեղադրական եզրակացությունը, մինչդեռ դատավորները պետք է համոզվեն, որ ամբաստանյալը հասկանում է առաջադրված մեղադրանքը,

համաձայն է մեղադրանքին և գիտակցում է իր համար արագացված կարգ անցկացնելու հետևանքները:

Չնայած արագացված դատավարությունը կիրառվում է նաև անչափահասների գործերով, այնուամենայնիվ դրա թույլատրելիության հարցը վիճելի է: Որոշ մասնագետների հավաստմամբ՝ «Հ օրենսդրությունը թույլ չի տալիս անչափահասների գործերով արագացված դատաքննություն իրականացնել: Այս մոտեցումը բացատրվում է այն հանգամանքով, որ անչափահասների գործերով արագացված դատավարություն իրականացնելու հստակ օրենսդրական հիմք գոյություն չունի, հետևաբար դրա կիրառելիությունը իրավական հիմքերից զուրկ է:»

Անչափահասների արդարադատությունն իրականացնելիս արագացված դատական քննության կարգ կիրառելու հարցը լուծելիս անչափահասին պետք է տրվի իր կարծիքը հայտնելու իրավունք: Խնդիրն այն է, որ «Հ պրակտիկայում մի շարք դեպքերում մեղադրողի ներկայացրած մեղադրանքները անչափահասների համար պարզ ու հասկանալի չեն լինում: Դատավորները հարցեր չեն տալիս՝ համոզվելու համար՝ արդյոք մեղադրյալներն իրականում հասկացել են մեղադրանքը, թե՝ ոչ³:»

Նման պայմաններում անչափահասներն առավել հաճախ են առաջարկություններն ընդունում՝ գործողությունների հետևանքները գիտակցելու նրանց կարողությունների խիստ սահմանափակ լինելու պատճառով: Պարզապես նրանք հակված են ընդունելու այն լուծումները, որոնք կօգնեն գործը փակելուն, եթե նույնիսկ հետևանքները մեկ ամիս հետո ավելի կվատթարանան:

Մեկ այլ կարևոր խնդիր վերաբերում է այն դեպքերին, երբ անչափահասն ու նրա ծնողները/խնամակալը արագացված դատաքննություն իրականացնելու հարցում տարակարծիք են: Նման դեպքերում օրենսդրական կոնկրետ հիմքերի բացակայությամբ անհասկանալի է, թե դատավորը նախապատվությունը ծնողին, թե՝ անչափահասին կտա:

3 «Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում» հաշվետվություն, Քաղաքացիական հասարակության խնսություն, 2011:

Ներկայացված իրավիճակում անհրաժեշտ են ավելի հստակ ցուցումներ, որոնցով կառաջնորդվեն դատավորները արագացված կարգով գործեր քննելու համար։ Կամ ընդհանրապես անչափահաների գործերով արագացված դատավարության կիրառությունը օրենքի կոնկրետ դրույթով կարգելվի, և ցանկացած դեպքում կիրականացվի ընդհանուր քրեական դատավարություն, ինչն էլ կրիսի մարդու իրավունքները և իրավական պաշտպանության բոլոր մեխանիզմները պահպանելու սկզբունքի պահանջից։

Արագացված կարգի կիրառմամբ դատական քննության վերաբերյալ դիրքորոշում արտահայտել է «Հ ՎՃՐԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԸ, ԻԱՄԱԾԱՅՆ ՈՐԻ, Ի ԼՐՈՒՄՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ՝ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՈՐԱԲԵՍՈՒ ԱՄԲԱՍՏՈՎԱՆՅԱԼԸ ԿԱՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԸ ՀԱՎԻԱԽԱՍ ԼԻՆԻ, և ԵՆԹԱԴՐՅԱԼ ԻԱՆԳԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՀԻՆ ՆՐԱ ՏԱՍԱՆՈՒԹ ՏԱՐԻՆ ԼՐԱԳԱԾ ԼԻՆԻ⁴։

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

«Հ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 16-ՐԴ ԻՆԴՎԱԾԻ ԻԱՄԱԾԱՅՆ՝ «ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԹՆԲԱԳ Է... ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ ԴԹՆՎԻԱԿ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԱՆԳԼԿԱԳՎԵԼ ՊԵՏԱԿԱՆ և ԾԱԽԱ-ՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԻ ԻԵՏ ԱԹՆՎՈՂ ԻԱՆԳԱԳՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ։ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱՃԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՋՆԵՐԻ ՄԻՉՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՐԻԿ ԴԵՎՔԵՐՈՒՄ, Եթե դա չի ՎՆԱՍԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆԸ ԿԱՄ ՉԻ ԻԱՆԳԵՑՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՐԴԱՐԱ-ՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՎԻԱԿՄԱՆԸ, ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ ԴԹՆՎԻԱԿ ԴԱՏԱ-ԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԱՆԳԼԿԱԳՎԵԼ ՆԱև։

1) անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին և արժանապատվությանն առնչվող իանցագործությունների վերաբերյալ գործերով։

4 Թիվ ԵԿԴ/0209/01/10 գործով ՎՃՐԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ, կետ 25։

2) անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.

3) քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում»:

Ըստ էության, անչափահասների գործերով այս հարցին հատուկ մոտեցում գոյություն չունի: Անչափահասի վերաբերյալ վարույթի քննությունը դատարանում պետք է դռնփակ անցկացվի: Դռնբաց դատական նիստ անցկացնելու դեպքում դատարանը պարտավոր է անչափահաս մեղադրյալի իրավունքներն ու շահերը պաշտպանելու միջոցներ ձեռնարկել:

Անչափահասների անձնական կյանքի իրավունքը պահանջում է, որ դատավարության բոլոր մասնակիցները, որոնք ապահովում են դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից նշանակված միջոցների կիրառումը, իրենց շփումներում գաղտնի պահեն անչափահասի վերաբերյալ տեղեկությունները: Անչափահաս մեղադրյալի մասին տեղեկատվությունը պետք է գաղտնի և փակ պահվի երրորդ անձանց համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք անմիջականորեն ներգրավված են նախնական կամ դատական քննության փուլում, այդ թվում՝ դատավճիռ կայացնելիս:

ՀՀ-ում անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս պետք է գաղտնիության պահպանման պարտականություն դրվի անչափահասի գործերով դատավարությանը ներգրավված բոլոր անձանց վրա: Անչափահասների շահերի պաշտպանությունից և ապագայում սոցիալական վերահստեղմանը նպաստելու մտահոգությունից ելնելով՝ պետք է արգելվի նաև լրատվության միջոցներով իրապարակել անչափահասի անունը, լուսանկարը կամ անձնական կյանքի վերաբերյալ որևէ այլ տեղեկություն:

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԻԿԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ

« քրեական օրենսգիրքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասին պատժից ազատվելու հնարավորություն է ընձեռում: Մասնավորապես, օրենսգրքի 93-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է պատժից ազատվել, եթե դատարանը գտնի, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան անչափահասների հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով:

Հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը երեք տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան չափահաս դաշնալը:

Վերոնշյալ հաստատություններում գտնվելը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե դատարանը ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատության ղեկավարի միջնորդությամբ գտնի, որ անչափահասը տվյալ միջոցը հետագայում կրելու կարիք չունի:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասողիալական վարք դրսենորած երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով հանրապետությունում գործում են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ (երկարօրյա և գիշերօրթիկ ռեժիմով), որոնք իրականացնում են հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրեր:

Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, հակասողիալական վարք դրսենորած երեխաների համար գործում է մեկ հատուկ դպրոց՝ հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրը Վարդաշենում: Սակայն այդ դպրոցում դատական ակտի հիման վրա չեն կարող տեղավորվել այն անչափահասները, ում նկատ-

մամբ դատարանը կիրառել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Հայաստանի Հանրապետությունում գործում են նաև՝ մեկ ուղղիչ հիմնարկ դատապարտված անչափահասների համար, դատարանի դատավճրին սպասող անչափահասների մեկ կենտրոն, որը գտնվում է արդարադատության նախարարության Ենթակայության ներքո, և երեխաների աջակցման մեկ կենտրոն: Բորոր կենտրոններն աշխատում են ԱՄՆ արդարադատության համայնքային կենտրոնների մոդելի հիման վրա: Ըստ էության դրանք համարվում են ոստիկանության բաժանմունքների այլընտրանքներ:

Խնդիրն այն է, որ կենտրոններից ոչ մեկը կալանավորման կամ ազատազրկման այլընտրանք չի հանդիսանում: Աշխատանքները հիմնականում ծավալվում են քրեական պատասխանատվության տարիքից ցածր և ոստիկանության ցուցակներում գրանցված երեխաների կամ 18 տարեկանից ցածր անչափահասների հետ, որոնք կատարել են մանր վարչական իրավախսութուններ:

Բացի այդ, ոստիկանության կողմից անչափահասներին վերականգնողական կամ ուսումնադաստիարակչական կենտրոններ ուղարկելը քրեադատավարական օրենսգրքում որևէ կարգավորում գոյություն չունի: Թեև գոյություն ունեն անչափահասների ուսումնադաստիարակչական կենտրոններ, գոյություն չունի որևէ օրենք, որը կկարգավորի այլընտրանքային միջոցների, մասնավորապես՝ անչափահասներին ուսումնադաստիարակչական կենտրոնում տեղավորելու և դրա հետ կապված հետաքննության ու նախաքննության մարմինների լիազորությունների հետ կապված հարցերը:

Փաստորեն, ուսումնադաստիարակչական և հատուկ դաստիարակչական կենտրոնների առումով ՀՀ-ում առկա են հետևյալ հիմնական խնդիրները.

- բացակայում են այնպիսի ուսումնադաստիարակչական հաստատություններ, որտեղ կարող են տեղավորվել հանցանք կատարած անչափահասները,
- հանցանք կատարած անձանց ուսումնադաստիարակչական հիմնարկներ տեղավորելու հստակ օրենսդրական կարգա-

Վորման բացակայությունը, որի պարագայում դատարանների կողմից դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները չեն ընտրվում,

- գործող հաստատությունների (ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական) չափանիշներին անհամապատասխանությունը:

Այս առումով անհրաժեշտ է ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխան երեխայակենտրոն, անչափահասների վերականգնողական արդարադատության համակարգ՝ գործուն հատուկ դաստիարակչական հիմնարկների մասնակցությամբ, որոնք կապահովեն անչափահասների նկատմամբ պատժի այլընտրանքային միջոցների կիրառությունը:

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հ քրեական դատավարության օրենսգիրքը պարունակում է առանձին գլուխ՝ նվիրված քրեական դատավարությունում ընդգրկված անձանց պաշտպանությանը: Հայաստանի օրենսդրության համաձայն և՝ տուժողները, և՝ վկաները հանդիսանում են քրեական դատավարությանը մասնակցող անձինք:

Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի համար կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու շահերը, ունի պաշտպանության իրավունք: «Պաշտպանության կարիք ունեցող անձի» կամ «պաշտպանվող անձի» պաշտպանությունը կատարում է վարույթն իրականացնող մարմինը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը, հայտնաբերելով, որ անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց կիրառելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման:

« Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է հետևյալ պաշտպանության միջոցները.

1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում. 2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը. 3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը. 4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը. 5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը. 6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը. 7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը. 8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը. 9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը. 10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը. 11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դրնիակ դատական քննություն անցկացնելը. 12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման⁵:

Ինչպես երևում է, ներպետական օրենսդրությունում տեղ են գտել իիմնականում տուժողների և վկաների պաշտպանությանը վերաբերող միջազգային փաստաթղթերի դրույթները՝ նախատեսելով պաշտպանության միջոցների մեջ բազմազանություն: Դրանցից մի քանիսը, մասնավորապես, անձի ինքնությունը թաքցնելը, դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը, դրնիակ դատական քննություն անցկացնելը, անձի բնակության վայրը փոխելը, կարևորագույն նշանակություն ունեն անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության տեսանկյունից և կարող են բավականին արդյունավետ լինել տուժողների և վկաների

5 « Քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 98:

պաշտպանության համար: Օրինակ, 98³ հոդվածը նախատեսում է անձի ինքնությունը հաստատող տվյալների պահպանումը, ինչը իրականացվում է

1. քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով: Պաշտպանվող անձի տվյալների փոփոխությունը կատարվում է վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա: Տեղեկությունները սահմանափակելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը և դրան առնչվող նյութերը առանձնացվում են քրեական գործի մյուս նյութերից և պահպում վարույթն իրականացնող մարմնի մոտ: Հիմնական վարույթից առանձնացված որոշումը և դրան առնչվող նյութերը մատչելի են միայն դատարանի և վարույթն իրականացվող մարմնի համար, իսկ դատավարության մյուս մասնակիցները դրանց կարող են ծանոթանալ միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, եթե դա անհրաժեշտ է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելու համար կամ քրեական գործի քննության համար էական նշանակություն ունեցող որևէ հանգամանք պարզելու համար,
2. պաշտպանվող անձի մասին տեղեկություններ տրամադրելու վրա ժամանակավոր արգելք դնելու միջոցով:

Այդուամենայնիվ, անհրաժեշտ է նկատել, որ սույն գլուխը պարունակում է ընդհանուր բնույթի հասկացություններ, որոնք կիրառելի են ցանկացած հանցագործության նախաքննության և դատաքննության պայմաններում, առանց մասնավորեցնելու անշափահասների ներգրավվածության ռեպքում դրանց կիրառման առանձնահատկությունները (ներառյալ՝ դրանց պարտադիրությունը): Սա ենթադրում է, որ պաշտպանության միջոցների կիրառման հարցը լուծվում է անհատապես, այն դեպքում,

Երբ անչափահաս տուժողների և վկաների խոցելիության հետևանքով նրանց պաշտպանության անհրաժեշտությունը իրավականորեն չի ճանաչվում: Մյուս կողմից էլ, օրենսդրությունը չի նախատեսում որոշակի պահանջներ և չափանիշներ կոնկրետ անձի նկատմամբ կոնկրետ պաշտպանության միջոցի ընտրման նպատակահարմարության և համապատասխանության գնահատման համար:

Միակ իրավական դրույթը, որը հատկապես վերաբերում է անչափահաս տուժողներին, արտացոլված է Քրեական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածում, որը սահմանում է, որ անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ:

Այդուամենայնիվ, պաշտպանության միջոցների կիրառման պրակտիկան Հայաստանում վկայում է, որ պրակտիկայում պաշտպանության միջոցները լայնորեն չեն կիրառվում՝ դարձնելով դրանք ձևական և ոչ արդյունավետ:

Մյուս կողմից, «Հ օրենսդրությամբ թվարկված պաշտպանության միջոցները առավել կոնկրետ ուղղված են տուժողների և վկաների ֆիզիկական պաշտպանությանը: Նախաքննության և դատական քննության համատեքստում գոյություն ունեն վկաների պաշտպանության երեք հիմնական սկզբունքներ, որոնք կարելի է ընդհանրացնել որպես անարդար վերաբերմունքի դեմ ֆիզիկական և հոգեբանական պաշտպանություն:»

Ավանդաբար վկաների պաշտպանություն ասելով հասկացվում է վկաների ֆիզիկական պաշտպանություն. պաշտպանության այլ ձևերը, մասնավորապես հոգեբանականը, նույնպես կարևոր են:

Հոգեբանական պաշտպանության հիմնական տարրը, որը բացակայում է Հայաստանում, տուժողի հոգեբանական վիճակի կայունացումն է և հետագա ցանկացած սթրեսային և լարված վիճակներից՝ գործի քննության արդյունքում կրկնակի վիկտիմիզացիայից, հոգեկան այլ վնասվածքներից, խուսափումն է:

Նման հոգեբանական երաշխիքները կարող են ներառել տուժողներին և վկաներին դատարանում քննության մասին ամբողջական ինֆորմացիայի տրամադրում, ինչպես կընթանա քննությունը, որում նրանք ներգրավված են, ինչպիսի հարցեր նրանց կտրվեն, թույլատրել տուժողի համար վստահելի անձին ուղեկցել և խորհրդակցել վերջինիս հարցաքննության ժամանակ, տուժողների հետ աշխատելու հատուկ պատրաստավածություն անցած դատավորների, դատախազների և քննիչների ներգրավվածությունը՝ ինարավորին չափ զգովշ լինելով տուժողներին հարցաքննելու և ուսումնասիրելու ժամանակ և այլն:

Այդպիսով, «Հ օրենսդրությամբ պաշտպանության միջոցների նշանակությունը չպետք է մեկնաբանվի նեղ իմաստով՝ ընդգրկելով միայն տուժողների և վկաների ֆիզիկական պաշտպանությունը, այլև անհրաժեշտ է ապահովել վերջիններիս հոգեբանական աջակցությամբ՝ բացառելու նրանց կրկնակի վիկտիմիզացիայի ինարավորությունը»:

Տուժողներին և վկաներին պաշտպանության միջազգային չափանիշները բավարարելու համար անհրաժեշտ է հպատակատախանեցնել պաշտպանության միջոցները տուժողների և վկաների պահանջներին և ձևավորել դրանց կիրառման հատուկ ռեժիմներ: Պաշտպանության միջոց կիրառելու հարցի քննարկման ժամանակ կանխավարկածը պետք է ուղղված լինի անչափահաս ուտիժողների նկատմամբ դրանց կիրառմանը: Պաշտպանության միջոցների կիրառման հարցում վարույթն իրականացնող մարմինները չպետք է ընձեռնված լինեն հայեցողական լիազորություններով, այլ օրենքը պետք է նախատեսի հստակ չափանիշներ՝ պաշտպանվող անձի ֆիզիկական անվտանգության և հոգեբանական վիճակի գնահատման համար: Անչափահաս տուժողների և վկաների ներգրավվածությամբ գործերում պաշտպանության միջոցների կիրառումը պետք է պարտադիր լինի, դատարանը պետք է ունենա միայն պաշտպանության միջոցի կոնկրետ տեսակն ընտրելու ազատություն՝ ելնելով իրավիճակի յուրահատկություններից՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները՝ սեռական բռնության համախտանիշի հետևանքները, հոգեբանական սթրեսի և վնասվածքների հետևանքները, դատարանին առնչվող վախի

հետևանքները, մեղադրյալի նկատմամբ վախի հետևանքները, ծայրահեղ սթրեսի հետևանքները ֆիզիկական վիճակի վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դրամային պատիժ սահմանել միայն այն տասնվեց տարին լրացած անչափահաս ամբաստանյալների նկատմամբ, ովքեր ինքնուրույն գումար են վաստակում: Տուգանքի վճարման համար սահմանել տարաժամկետ վճարման համակարգ՝ սահմանելով վճարման ենթակա նվազագույն գումարի չափը:
2. Տասնվեց տարին լրացած անչափահասների նկատմամբ հանրային աշխատանքների նշանակման համար իինք ընդունել անչափահասի ունակությունները, կրթական աստիճանը, հետաքրքրությունները և ներգրավել այնպիսի աշխատանքներում, որոնց կատարումը չի հանգեցնի անչափահասի մոտ ֆիզիկական, մտավոր և հոգեբանական զարգացման խաթարման:
3. Ազատազրկումը որպես պատիժ նախատեսել միայն հանրության համար առավել մեծ վտանգավորություն բնույթով և աստիճանով օժտված հանցագործությունների համար (ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ) այն դեպքում, երբ այլ պատիժների միջոցով հնարավոր չէ հասնել անչափահասի նկատմամբ կիրառվող պատժի նպատակներին:
4. Անչափահասի նկատմամբ որպես պատիժ սահմանել ազատության սահմանափակումը՝ կախված հանցագործության բնույթից, որոշակի վայրերի և հաստատությունների, ինչպես նաև որոշակի անձանց հետ շփվելու իրավունքից գրկելով:
5. Անչափահասների քրեական պատասխանատվությունը հնարավորինս փոխարինել այլընտրանքային միջոցներով: Որպես քրեական պատասխանատվությանը այլընտրանքներ օրենքով սահմանել այնպիսի այլընտրանքային միջոցներ,

ինչպիսիք են պրոբացիան, խորհրդատվությունը, դաստիարակչական, վերականգնողական, վերապատրաստման ծրագրերի իրականացումը, հատուկ ուսումնադաստիարակչական հաստատությունում տեղավորելը կարծ ժամանակով և այլն:

6. Ընդլայնել քրեական պատասխանատվությանը այլընտրանք համարվող միջոցների կիրառման շրջանակները՝ դրանք նախատեսել ոչ միայն մինչև տասնվեց տարեկան անչափահասների նկատմամբ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցագործությունների դեպքում, այլև ինչպես ծանր և առանձապես ծանր հանցագործությունների համար՝ հաշվի առնելով անչափահասի դերը և մասնակցության աստիճանը կատարված հանցագործությանը, այնպես էլ տասնվեցից տասնութ տարեկան անչափահասների համար ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործությունների համար:
7. Անչափահասների նկատմամբ քրեական արդարադատության իրականացումը վերապահել անչափահասների առանձնահատկությունների (հոգեբանական, սոցիալական, ֆիզիոլոգիական և այլն) կապակցությամբ վերապատրաստում անցած դատավորներին:
8. Դատախազության համակարգում ստեղծել անչափահասների գործերով հատուկ վերապատրաստում անցած դատախազների ստորաբաժանում: Դատախազության համակարգում տեղծել նաև անչափահաս դատապարտյալների նկատմամբ կիրառվող պատիժների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող ստորաբաժանում:
9. Նույն կերպ, անչափահասների գործերով նախաքննության իրականացումը կատարել համապատասխան անչափահասների գործերի քննության առանձնահատկությունների առնչությամբ վերապատրաստում անցած քննիչների կողմից:
10. Քրեական դատավարության օրենսգրքով սահմանել անչափահաս ամբաստանյալների գործերով դատական քննության հստակ առանձնահատուկ կարգ:

11. Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի համար ի լուրմն պաշտպանի պարտադիր մասնակցությանը, նախատեսել նաև հոգեբանի, սոցիալական աշխատողի կամ այլ մասնագետների պարտադիր ներգրավվածությունը վարույթին:
12. Օրենսդրորեն սահմանել որպես հոգեբան կամ սոցիալական աշխատող ներգրավվող մասնագետների սպառիչ ցուցակ: Միաժամանակ, ամրագուել կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնության պարտադիրությունը կոնկրետ անձի ներգրավմանը վարույթին՝ բացառելու անչափահասի վրա հոգեբանական ազդեցությունները:
13. Օրենսդրորեն սահմանել անչափահաս կասկածյալի/ մեղադրյալի ու օրինական ներկայացուցչի միջև ծագած տարածայնությունների դեպքում դրանց լուծման կարգը:
14. Անչափահաս մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար սահմանել առավել բարձր չափանիշներ: Միաժամանակ, որպես անչափահաս մեղադրյալի կալանավորման առավելագույն ժամկետ սահմանել 6 ամիսը:
15. Օրենսդրորեն սահմանել վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը անչափահասների նկատմամբ գործերի քննությունն իրականացնել առավել սեղմ ժամկետներում:
16. Ապահովել անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների և պարտականությունների պատշաճ պարզաբանում՝ ինչպես նախաքնննական մարմինների, այնպես էլ դատարանի կողմից:
17. Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի համար ապահովել քրեական գործով վարույթին արոյունավետորեն մասնակցելու երաշխիքներ:
18. Քրեական դատավարության օրենսգրքով հստակեցնել արագացված դատական քննության իրականացման հնարավորությունը անչափահասների գործերով:

19. Քրեական դատավարության օրենսգրքով սահմանել անչափահասների գործերով դժնիքակ դատական քննություն անցկացնելու կանխավարկածը: Դժնիքաց դատական քննություն իրականացնելու դեպքում, ապահովել անչափահասի վերաբերյալ անձնական տեղեկությունների գաղտնիություն: Արգելել լրատվության միջոցներով անչափահասի վերաբերյալ տեղեկությունների իրապարակումը, լուսանկարի ցուցադրումը և անչափահասին նույնականացնող այլ նյութերի ներկայացումը:
20. Վարույթն իրականացնող մարմինների համար սահմանել անչափահաս կասկածյալի ու մեղադրյալի վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց գաղտնի պահելու պարտականություն: Տեղեկությունների մեջ ներառել անչափահասի անձնական տվյալները, այդ թվում մտավոր և ֆիզիկական զարգացվածության, հոգեբանական վիճակի վերաբերյալ այլ տեղեկություններ: Միաժամանակ, սահմանել այն իրավիճակները, որոնց պայմաններում վարույթն իրականացնող մարմնի կողմից օրենքով պաշտպանվող տվյալների իրապարակումը չի հանդիսանա իրավախախտում:
21. Սահմանել հստակ ժամկետ անչափահասների նկատմամբ գործերով նյութերի (ինչպես քրեական պատասխանատվության, այնպես էլ այլընտրանքային միջոցների կիրառման դեպքերում) ոչնչացման համար: Հաշվի առնելով իրավախախտման բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ սահմանել տարբերակված ժամկետներ ոչ մեծ ծանրության, միշտն ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար:
22. Օրենդրորեն հստակեցնել ուսումնադաստիարակչական և բուժդաստիարակչական հիմնարկների կարգավիճակը, դրանց պայմանները, ենթակայությունը, տեղավորման կարգն ու այլ չափանիշները՝ համապատասխան միջազգայնորեն ընդունված չափանիշների:
23. Վերանայել ներպետական օրենսդրությունը, ընթացակարգերն ու պրակտիկան՝ ապահովելով անչափահաս տուժող-

ների և վկաների պաշտպանությանն ուղղված միջազգային չափանիշների ներմուծումը Հայաստանի օրենսդրություն։ Սա ներառյալ է տուժողների և վկաների պաշտպանության մասին հատուկ օրենքի ընդունում՝ իմանված վկաների պաշտպանության տիպային օրենքի վրա, որը պարունակում է տուժողների և վկաների պաշտպանության նվազագույն երաշխիքները։ Օրենքը նաև պետք է հստակորեն սահմանի պաշտպանվող անձանց ֆիզիկական անվտանգությանն ու հոգեբանական վիճակին սպառնացող վտանգների գնահատման չափանիշներ և ցուցումներ։

24. Վերանայել տուժողների և վկաների նկատմամբ կիրառվող պաշտպանության միջոցների պրակտիկան (ինչպես դատական, այնպես էլ քննչական մարմինների), կազմակերպել պաշտպանության միջոցների արդյունավետության կիրարման ուղղված ընդգրկուն քննարկումներ։
25. Երեխաների նկատմամբ բռնության գործերով ներմուծել նախաքննության և դատական քննության ընթացքում անչափահաս տուժողների և վկաների նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառման ավտոմատ կարգ՝ առաջնորդվելով իրավական ընթացակարգերի՝ երեխաների համար վնասակար հետևանքների կանխավարկածով։ Դատարանը կարող է իր հայեցողությամբ ընտրել կոնկրետ տեսակ պաշտպանական և վերականգնողական միջոցառումների կոնկրետ իրավիճակներում։ Դատարանը պետք է ունենա պաշտպանության կոնկրետ միջոցի ընտրման հայեցողություն՝ ելնելով գործի հանգամանքներից։ Անչափահաս տուժողների և վկաների վրա իրավական ընթացակարգերի ազդեցության գնահատման համար դատարանը կարող է ներգրավել մասնագետների։
26. Անչափահաս մեղադրյալների, տուժողների և վկաների հարցաքննությունները, փորձաքննությունները և վերջիններիս նեգրավմամբ քննչական այլ գործողություններն իրականացնել աջակցող մասնագետների (հոգեբան, սոցիալական աշխատող) մասնակցությամբ։

27. Օրենսդրութեն նախատեսել անչափահաս տուժողների և վկաների անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: